ԱՐԱ ԳԱԲՈՒԶՅԱՆ. «ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ԿԱՐՈՂ Է ՆՎԱԶԵԼ ԼԱՎ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԴԵՊՔՈՒՄ»:HETQ.AM

16.06.2015 12:34

Մեր պետությունը ամբողջությամբ վերանայում է քրեական արդարադատության ոլորտի օրենսդրությունը: Շուտով կունենանք քրեական դատավարության, քրեական և քրեակատարողական նոր օրենսգրքեր: Ոլորտի պատասխանատուները կոնկրետ ժամկետներ չեն նշում, թե երբ 3 նոր օրենսգրքերը կմտնեն ուժի մեջ:

Քրեակատարողական օրենսգրքի նոր նախագիծն արդեն ԱԺ-ում է: Քրեական նոր օրենսգրքի հայեցակարգը հունիսի 4-ին հաստատեց կառավարությունը, նախագծի աշխատանքները սկսվել են անցյալ տարվանից, շուտով դրանք կմոտենան ավարտին: Այս մասին «Արմենպրես» մամուլի ակումբում տեղեկացրեց ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալ Արման Թաթոյանը: Փոխնախարարը հույս հայտնեց, որ աշնանն արդեն կսկսվեն մասնագիտական, հանրային քննարկումները նախագծի շուրջ:

«Քրեական դատավարության, քրեական ու քրեակատարողական օրենսգրքերը սինխրոնիզացվելու են, միասնականացվելու են ոլորտը կարգավորող իրավական ակտերը, ենթաօրենսդրական ակտերից հիմնականում ձերբազատվել ենք»,- ասաց Արման Թաթոյանը:

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանի ղեկավարած աշխատանքային խումբը քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացնելու է ՀՀ արդարադատության նախարարությանը, ապա դրվելու է շրջանառության մեջ: «Շահագրգիռ գերատեսչությունները կանեն իրենց առաջարկությունները, դրանք ամփոփելուց հետո կներկայացվեն կառավարության աշխատակազմ և սահմանված կարգով հաստատվելուց հետո կուղարկվեն Ազգային ժողով: Այս պահին հստակ ժամկետներ նշելը սխալ կլինի»,- ասաց Արման Թաթոյանը:

Հայեցակարգային ի՞նչ փոփոխություններ են նախատեսված քրեական նոր օրեսգրքի նախագծով

Իրավաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանն առանձնացրեց հիմնական առանցք փոփոխությունները: Օրինակ՝ փոխվելու է ներկայիս օրենսգրքում առկա արարքի հայեցակարգը: Այսինքն՝ ներկա օրենսգրքով գործող ինչքան մեծ վնաս է պատճառվել, այնքան պատիժը պիտի խիստ

լինի սկզբունքը փոխվելու է: Ըստ Արա Գաբուզյանի՝ այսպես անտեսվում է հանցանք կատարողի անձը, դեպքի շարժառիթները, հանգամանքները: Մինչդեռ աշխարհում քրեական օրենսգրքերը հիմնված են երկու՝ արարքի և անձի հայեցակարգերի վրա: «Փորձել ենք այս համամասնությունը պահպանել նոր օրենսգրքի նախագծում»,- ասաց աշխատանքայի խմբի ղեկավարը:

Մյուս կարևոր հարցը ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքն է, որը հռոմեական իրավունքի սկզբունքից է գալիս՝ օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից: Սակայն, աշխարհի շատ երկրներում նախատեսված են նաև դեպքեր, երբ օրենքի չիմացությունը ազատում է պատասխանատվությունից:

ադեմիայում նոր քրեական օրենսգրքի լուծումներն արդեն դասավանդվում են: «Սա շատ կարևոր խնդիր է, որ ապագա կիրառողն արդեն իմանա այս լուծումները»,-ասաց ԱՆ փոխնախարարը:Շարունակությունը տես այստեղ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })